ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

EU4Digital

# Թվային շուկաների ներդաշնակեցում Արևելյան Գործընկերությունում

**EU4Digital**-ի նպատակն է տարածել **Եվրոպական միության Թվային միասնական շուկայի** առավելությունները **Արևելյան գործընկեր** երկրներում՝ ԵՄ աջակցությունն ուղղելով թվային տնտեսության և հասարակության ներուժի զարգացմանը տնտեսական աճի ապահովման, ավելի շատ աշխատատեղերի ստեղծման, մարդկանց կյանքի բարելավման և գործարարությանն աջակցելու համար Ադրբեջանում, Բելառուսում, Հայաստանում, Մոլդովայում, Վրաստանում և Ուկրաինայում:

## ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Թվային շուկաների ներդաշնակեցումն Արևելյան գործընկերության քաղաքացիներին շոշափելի արդյունքներ ապահովելու ԵՄ ճանապարհային քարտեզի՝ **20 արդյունք մինչև 2020** ակնկալվող արդյունքներից մեկն է: 20 արդյունքների վերաբերյալ ճանապարհային քարտեզում ԵՄ-ը ասում է. «Թվային տնտեսությունը ոլորտ է, որ ինչպես ԵՄ-ում, այնպես էլ Գործընկեր երկրներում սոցիալական և տնտեսական զարգացման, ինչպես նաև աճի և աշխատատեղերի ստեղծման դեռևս չօգտագործված ներուժ ունի»:

**EU4Digital նախաձեռությունը** մեկտեղում է ԵՄ առաջնահերթ մի շարք գործողություններ ու ծրագրեր

**EU4Digital ցանցերը** հիմնվել են 2016 թ.-ին և մեկտեղում են Արևելյան գործընկերների և ԵՄ անդամ երկրների ներկայացուցիչներին՝ աշխատելու հիմնական թեմատիկ ոլորտների ուղղությամբ:

**EU4Digital. աջակցելով թվային տնտեսությանն ու հասարակությանը Արևելյան գործընկերությունում,** եռամյա ծրագիր (2019-2022), որ խթանում է թվային տնտեսության ու հասարակության հիմնական ոլորտները ԵՄ նորմերին և փորձին համապատասխան:

**EU4Digital - լայնաշերտ ինտերնետի ռազմավարություններ ԱլԳ տարածաշրջանում** (2018-2020) ծրագիր, որն իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից՝ աջակցելու Արևելյան գործընկեր երկրներին լայնաշերտ ինտերնետի ռազմավարության մշակման ու իրականացման հարցում:

ԵՄ շուտով մեկնարկող **CYBER/ԿԻԲԵՐ** ծրագիր՝ հզորացնելու կիբերանվտանգությունը գործընկեր երկրներում և մեծացնելու վստահությունը թվային ծառայությունների օգտագործման ընթացքում:

Թվային տնտեսության ու հասարակության տարածումը բերում է տնտեսական աճ, ստեղծում աշխատատեղեր, բարելավում կյանքն ու աջակցում գործարարությանը.

- ավելի լավ **առցանց ծառայություններ՝** առավել **հարմար գներով և** ավելի մեծ **ընտրության** հնարավորությամբ
- ավելի շատ **ներդրումներ, առևտուր, աշխատատեղեր**
- ստարտափ էկոհամակարգի խթանում և **ընկերությունների աճ**

Ծրագիրը վերաբերում է վեց թեմատիկ ոլորտների. աջակցություն EU4Digital ցանցերի գործունեությանը՝ թվային տնտեսության ու հասարակության բարելավման կառուցվածքի ստեղծման գործում՝ ի նպաստ գործարարության ու քաղաքացիների.

# EU4DIGITAL ԱՋԱԿՑԵԼՈՎ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### Հեռահաղորդակցային կանոններ

- Ընդհանուր ռոումինգ դաշտի ձևավորում մինչև 2020 թ.
- Աջակցություն ազգային կարգավորող մարմիններին
- Կոորդինացված ռազմավարություններ հաճախականությունների բաշխման համար

### ՏՀՏ նորարարություն

- ՏՀՏ հետազոտությունների, ստարտափերի և նորարարության էկոհամակարգերի զարգացում

### Էլեկտրոնային առևտուր (e-առևտուր)

- Առևտրի խթանում ընդհանուր կառուցվածքների առաջմղմամբ.
  - e- կոմերցիա / առևտուր
  - e- մաքսային ծառայություն
  - e- լոգիստիկա
- Թվային Տրանսպորտային միջանցքներ

### Էլեկտրոնային հմտություններ (e-հմտություններ)

- Թվային հմտությունների ռազմավարությունների մշակում
- e-կարողությունների շրջանակ ՓՄՁ-ների համար

### Էլեկտրոնային առողջություն (e-առողջություն)

- Ներդաշնակեցված ազգային կառուցվածքներ e-առողջության համար ԱլԳ գործընկեր երկրների և ԵՄ միջև
- Անդրսահմանային e-առողջության հարթակ ԱլԳ տարածաշրջանում

### Վստահություն & անվտանգություն

- Անդրսահմանային e-ստորագրություն
- Տարածաշրջանային կառուցվածք գործարարության Անդրսահմանային e-ծառայությունների համար
- Կիբերանվտանգության ռազմավարություններ հիմնական ենթակառուցվածքների դիմակայության համար

Ֆինանսավորվում է Եվրոպական միության
EU4Digital նախաձեռնության ներքո